

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան

14 հոկտեմբեր 2011 թ. N 42

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆ ՈՒՄ N 42

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ, ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԿՄԱՆ ՄԻ ՔԱՂԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի (Շահութահարկի հաշվարկման ընդհանուր հիմքը) 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա (եթե Օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները), ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական (ձեռքբերման) արժեքով (բացառությամբ՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերազնահատման արդյունքների):

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ա»-«դ» կետերի և 10-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, Օրենքի իմաստով՝ ակտիվ է համարվում կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոցը (գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքների հետ կապված անձնական ոչ գույքային իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտարժույթը, արժեթղթերը, դեբիտորական պարտքը և այլ գույքը), պարտավորություն է համարվում կազմակերպության առկա պարտքը (վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն), սեփական կապիտալ է համարվում ակտիվների և պարտավորությունների տարբերությունը, իսկ եկամուտ (ծախս) է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը կամ աճը (արտահոսքը կամ նվազումը) կամ պարտավորությունների նվազումը (աճը), որոնք հանգեցնում են կազմակերպության սեփական կապիտալի (ակտիվների և պարտավորությունների տարբերության) ավելացմանը (նվազեցմանը):

Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն Օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում՝ մասնակիցների, բաժնետերերի, փայտերերի, անդամների (այսուհետ՝ մասնակիցներ) կողմից կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները, կազմակերպության բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայտաժինների, փայերի (այսուհետ՝ բաժնեմասեր) տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ծախս չեն համարվում՝ կազմակերպության սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին (շահաբաժինների կամ նման այլ ձևով), այլ անձի կանոնադրական կապիտալում կազմակերպության կատարված ներդրումները, կազմակերպության կողմից հետզնված իր բաժնետոմսերի իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը:

Օրենքի 26-րդ, 27-րդ և 28-րդ հոդվածների համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝ ոեզիդենտ կազմակերպության ստացած շահաբաժինների գումարի չափով, կազմակերպության կողմից հետզնված իր բաժնեմասերի իրացման և հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով (եթե տվյալ բաժնեմասերը հետ են գնվել օրենքի պահանջի ուժով), այլ կազմակերպության լուծարման

դեպքում ռեգիդենտ կազմակերպության բաժնեմասերի դիմաց ստացված մնացորդային գույքի գումարի և բաժնեմասերի հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «Ժք» ենթակետի և 10-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «ե» ենթակետերի համաձայն հարկվող եկամուտը որոշելիս ֆիզիկական անձի հարկատուի համախառն եկամուտը նվազեցվում է ստացված շահաբաժինների չափով, ինչպես նաև բաժնետոմսերի կամ ներդրում վկայող այլ արժեքորդերի օտարումից, այլ արժեքորդերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով:

Կանոնադրական կապիտալի ձևավորման, ավելացման և նվազեցման հետ կապված նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ դեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

1. Ռեգիդենտ կազմակերպության (**այսուհետ՝ ռեգիդենտ**) ստեղծման ժամանակ կանոնադրական կապիտալի ձևավորման, դրա չափի հետագա ավելացման համար բաժնեմասեր տեղաբաշխելիս բաժնեմասերի անվանական արժեքների չափով մասնակիցների կողմից փաստացի կատարված ներդրումները ռեգիդենտի համար չեն համարվում եկամուտ: Բաժնեմասերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի միջև տարբերություն առաջանալու դեպքում ռեգիդենտի համար դրական տարբերությունը չի համարվում եկամուտ, իսկ բացասական տարբերությունը՝ ծախս (նվազեցում):

Մասնակիցների մոտ ձեռք բերված բաժնեմասերը որպես ակտիվ հաշվառվում են սկզբնական (ձեռքբերման) արժեքով (ռեգիդենտից ձեռք բերածը՝ ռեգիդենտի կանոնադրական կապիտալում փաստացի կատարված ներդրումների արժեքով, իսկ այլ մասնակիցից ձեռք բերածը՝ փաստացի կատարված վճարման արժեքով) և վերագնահատման ենթակա չեն:

2. Ռեգիդենտի կողմից իր տեղաբաշխած բաժնեմասերի հետզնման կամ լուծարման հետևանքով լուծարային արժեքի տրամադրման դեպքերում բաժնեմասերի անվանական արժեքների չափով մասնակիցներին վերադարձման ենթակա գումարները ռեգիդենտի համար չեն համարվում ծախս (նվազեցում): Բաժնեմասերի անվանական արժեքի և հետզնման գնի միջև տարբերություն առաջանալու դեպքում գործարքի կատարման պահին ռեգիդենտի համար դրական տարբերությունը չի համարվում եկամուտ, իսկ բացասական տարբերությունը՝ ծախս (նվազեցում):

Բաժնեմասերի սկզբնական (ձեռքբերման) արժեքների չափով ռեգիդենտի կողմից բաժնեմասերի հետզնման գնի կամ լուծարային արժեքի դիմաց վերադարձված գումարները մասնակիցների համար չեն համարվում եկամուտ: Բաժնեմասերի հետզնման գնի (կամ լուծարային արժեքի) և սկզբնական (ձեռքբերման) արժեքի միջև տարբերություն առաջանալու դեպքում գործարքի կատարման պահին մասնակիցների համար դրական տարբերությունը համարվում է եկամուտ (ֆիզիկական անձ մասնակիցի դեպքում՝ նվազեցվող եկամուտ (որպես բաժնետոմսերի կամ ներդրում վկայող այլ արժեքորդերի օտարումից ստացված եկամուտ)), իսկ բացասական տարբերությունը՝ ծախս (նվազեցում):

3. Ռեգիդենտի կողմից հետզնված իր բաժնեմասերի հետագա իրացման դեպքում բաժնեմասերի իրացման գնի և հետզնման գնի դրական տարբերությունը ռեգիդենտի համար համարվում է եկամուտ (եթե բաժնեմասերի հետզնումը կատարվել է օրենքի պահանջի ուժով, ապա այդ տարբերությունը նվազեցվում է ռեգիդենտի համախառն եկամտից որպես այլ նվազեցում), սակայն բացասական տարբերությունը չի համարվում ծախս (նվազեցում):

4. Համալրված կանոնադրական կապիտալի գծով ռեգիդենտի մոտ մասնակիցների հանդեպ կրեդիտորական պարտք առաջանում է՝

ա) բաժնեմասի հետզնման դեպքում՝ հետզնման գնի չափով, ռեգիդենտի կողմից բաժնեմասերի հետզնման գնի որոշման ընդունման պահից.

բ) ռեգիդենտի լուծարման դեպքում՝ օրենքով սահմանված հերթականությամբ այլ պարտավորությունները մարելուց հետո, մասնակիցներին վերադարձման ենթակա գումարի (բաժնեմասի լուծարային արժեքի) չափով:

5. Ուղիղենտի կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում՝

1) Եթե ավելացումը կատարվում է լրացուցիչ թողարկված բաժնեմասերի տեղաբաշխման կամ տեղաբաշխված բաժնեմասերի անվանական արժեքի մեծացման դիմաց մասնակիցների նոր փաստացի ներդրումների հաշվին, ապա այդ ներդրումները ուղիղենտի համար չեն համարվում եկամուտ, իսկ մասնակիցների մոտ հաշվառվող բաժնեմասերի սկզբնական (ձեռքբերման) արժեքը ավելանում է փաստացի կատարված ներդրումների արժեքով.

2) Եթե ավելացումը կատարվում է ուղիղենտի ֆինանսական շահույթի բաշխման արդյունքում մասնակիցներին հասանելիք շահաբաժնների հաշվին, ապա բաշխված շահաբաժնները մասնակցի համար համարվում են եկամուտ և հարկվում են շահութահարկով ուղիղենտի (հարկային գործակալի) կողմից եկամտի վճարման աղբյուրի մոտ օրենքով սահմանված ընդհանուր կարգով, եթե մասնակիցը ոչ ուղիղենտ կազմակերպություն է: Այնուհետև՝ մասնակիցների շահաբաժնների հաշվին կատարված ներդրումները ուղիղենտի համար չեն համարվում եկամուտ, իսկ մասնակիցների մոտ հաշվառվող բաժնեմասերի սկզբնական (ձեռքբերման) արժեքը ավելանում է շահաբաժնների հաշվին կատարված ներդրումների արժեքով.

3) Եթե ավելացումը կատարվում է ուղիղենտի ֆինանսական սեփական կապիտալի հաշվին (լրացուցիչ թողարկված բաժնեմասերի տեղաբաշխման կամ տեղաբաշխված բաժնեմասերի անվանական արժեքի մեծացման միջոցով), ապա՝

ա. մասնակիցների մոտ հաշվառվող բաժնեմասերի սկզբնական (ձեռքբերման) արժեքը ավելանում է լրացուցիչ ձեռք բերված բաժնեմասերի արժեքով, որը մասնակիցների համար համարվում է հետաձգված եկամուտ (որպես գույքի արժեքի հավելած) և հարկվում է այդ բաժնեմասերի հետագա իրացման (կամ հետազայռում ուղիղենտի կողմից հետզնման կամ ուղիղենտի լուծարման) դեպքում (այդ թվում՝ հարկային գործակալի կողմից, եթե մասնակիցը ոչ ուղիղենտ կազմակերպություն է):

բ. կանոնադրական կապիտալի ավելացված մասը ուղիղենտի համար չի համարվում եկամուտ:

6. Ուղիղենտի կանոնադրական կապիտալի նվազման դեպքում՝

1) Եթե նվազումը կատարվում է մարվող բաժնեմասերի դիմաց մասնակիցներին փաստացի վճարումների (դրամական միջոցներով կամ այլ գույքով) տրամադրմամբ, ապա այդ վճարումները ուղիղենտի համար չեն համարվում ծախս (նվազեցում) և այդ չափով նվազում է ուղիղենտի կանոնադրական կապիտալի գծով առաջացած կրեդիտորական պարտքը մասնակիցներին, իսկ մասնակիցների մոտ մարվող բաժնեմասերի արժեքը նվազում է սկզբնական (ձեռքբերման) արժեքի չափով: Ընդ որում՝ մարվող բաժնեմասի դիմաց հետզնման գնի և սկզբնական (ձեռքբերման) արժեքի (որից նախապես հանդում է հետաձգված եկամուտը, որը մասնակցի մոտ դեռևս չի ճանաչվել որպես հարկվող եկամուտ և չի ներառվել համախառն եկամտի մեջ) դրական տարբերությունը մասնակիցների համար համարվում է հարկվող եկամուտ (գույքի արժեքի հավելած) և ներառվում է համախառն եկամտի մեջ (ֆիզիկական անձ մասնակցի դեպքում՝ որպես նվազեցվող եկամուտ):

2) Եթե նվազումը կատարվում է ուղիղենտի կանոնադրական կապիտալը ֆինանսական սեփական կապիտալի (գուտ ակտիվների) արժեքին համապատասխանեցնելու նպատակով, ապա կանոնադրական կապիտալի նվազեցված գումարը ուղիղենտի համար չի համարվում եկամուտ, իսկ մասնակիցների մոտ հաշվառվող բաժնեմասերի սկզբնական (ձեռքբերված) արժեքի նվազումը՝ ծախս (նվազեցում):

7. Լուծարվող ուղիղենտի կանոնադրական կապիտալի, ֆինանսական շահույթի (վնասի) և սեփական կապիտալի այլ տարբերի բաշխումը մասնակիցների միջև ուղիղենտի մոտ չի առաջանում հարկվող եկամուտներ (որպես պարտավորության նվազեցում) կամ նվազեցվող ծախսեր (որպես ակտիվների արտահոսք) և մասնակիցներին կատարված վճարումների (դրամական միջոցներով կամ այլ գույքով) չափով նվազում է կանոնադրական կապիտալի գծով առաջացած կրեդիտորական պարտքը մասնակիցներին, իսկ մասնակիցների մոտ մարվող բաժնեմասի ձեռքբերման (սկզբնական) արժեքը գրոյացվում է: Ընդ որում՝ մարվող

բաժնեմասի դիմաց տրամադրվող վճարման և բաժնեմասի սկզբնական (ձեռքբերման) արժեքի (որից նախապես հանվում է հետաձգված եկամուտը, որը մասնակցի մոտ դեռևս չի ճանաչվել որպես հարկվող եկամուտ և չի ներառվել համախառն եկամտի մեջ) դրական տարբերությունը մասնակիցների մոտ համարվում է հարկվող եկամուտ (գույքի արժեքի հավելած) և ներառվում է համախառն եկամտի մեջ (ֆիզիկական անձ մասնակցի դեպքում՝ որպես նվազեցվող եկամուտ):

8. Ուղղիղենտի՝ օրենքով սահմանված կարգով վերակազմակերպման (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) դեպքերում վերակազմակերպմանը մասնակցող կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների (այդ թվում՝ կանոնադրական կապիտալի), ֆինանսական շահույթի (վնասի) և սեփական կապիտալի այլ տարրերի վերաբաշխման արդյունքում հարկման նպատակներով եկամուտներ կամ ծախսեր (նվազեցումներ) չեն առաջանում: